

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Օր մը այս արեւը պիտի ա՛լ չըծագի,
Պիտի ա՛լ չըսես ձայնը այս կոչնակի,
Հեռասանի զանգերն հոգիդ պիտի չօրրեն,
Ունայնութիւնն պիտի վայէ յաւերժօրէն:

Աւուսն է համաճարած ...
Մըսիս մէջ բու մը թառած
Կը վայէ անվերջօրէն՝
Երազին վըրայ մեռած:

Աւուսն է հոգիիս մէջ ...
Ո՞վ Յոյսին լոյսերն մարած
Կը դարձնէ կեանքն էջ առ էջ՝
Ոչինչին նայուածքն յառած:

Վէրքերէս մէկ - մէկ ծաղիկներ բուսան,
Վէրքէ մ' կարմիր վարդ, ուրիշէ մ' շուշան,
Մեխակ, մանուշակ, յակիկնք ու նարկիզ.
Մարդիկ բոյրն առին, վէրքը չըսեսան:

Վերջին երազն ալ մեկնեցաւ անդարձ,
Կանչերն հոգեթով լըռեցին յանկարծ,
Ունայնութիւնը կը հիստէ ոսայն,
Պատահմբ դամբան կ'երթայ ուսամբարձ:

Կիսագիտակ ներկայութեամբ մ'անըրջային,
Մաս կազմէի արեւոյսի շաղ ու շողին,
Մաս կազմէի ես թախծալի մը թընճաղին,
Ու զեփիւռին մէջ շարական շրջընջայի:

Զըլլային եթէ տառապանքն ու մահ, ցաւ ու սիրոյ վէրք,
Պիտի չըլլային ոչ արուեստ, ոչ երգ,
Ոչ հոգու թրուիչ՝ կատարներ անհաս, ոչ երազներ պերճ ...
Պիտի՝ յաւէտ տիեզեր Զանձոյթը ըսերջ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

